

Հաւատամք եւ ի ՄԻ միայն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ եւ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ, (ՍՈՒՐԲ) եկեղեցի

«Ի հնգետասաներորդի ամի տէրութեան Տիբերեայ կայսեր, ի դատաւարութեան Հրէաստանի Պիղատոսի Պոնտացւոյ եւ ի չորրորդապետութեան Գալիլեացւոց Հերովդի, եւ Փիլիպպոսի եղբօր նորա չորրորդապետութեան ի Տուրացւոց եւ ի Տրաքոնացւոց աշխարհին, եւ ի չորրորդապետութեան Լիւսանեայ Աբիլենցւոյ, եւ ի քահանայապետութեան Անանայի եւ Կայիափայ եղեւ բան Աստուծոյ ի վերայ Յովհաննու որդւոյ Զաքարիայ յանապատի անդ» (Ղուկաս Գ: 1—2):

Վերոյիշեալ ստոյգ եւ հաւաստի պատմական համակարգի մէջ է, որ Աւետարանիչը տեղադրում է Քրիստոսի առաքելութեան սկիզբը: Քրիստոնէութիւնը որպէս կրօն, արդիւնք է Աստուածային միջամտութեանը՝ մարդկային պատմութեան ոլորտից ներս, Յիսուսի մարդեղութեամբ: Քրիստոնէական կրօնը պատմականօրէն հիմնաւորելու ցայտուն փաստարկներից մէկը Հաւատոյ Հանգանակի մէջ տեղադրուած՝ «եւ խաչեցաւ վասն մեր առ Պոնտացւով Պիղատոսի»[1] արտայայտութիւնն է: Ինչո՞ւ գաւառական աննշան մի պաշտօնեայի անունը յիշատակւում է «Հաւատոյ Հանգանակի» կարճ, բայց եւ Քրիստոնէական հաւատքի ամենապերճախօս յայտարարութեան մէջ, եթէ ոչ ընթերցողին ու լսողին յիշեցնելու Յիսուսի պատմական անձնաւորութիւն լինելը, իբրեւ մի մարդ, ծնունդով հրեայ, որ չարչարուեց եւ խաչուեց Հռոմէական իշխանութեան լծի տակ, եւ որին ժամանակակից մարդիկ տեսել, լսել եւ նոյնիսկ ձեռք էին տուել. «Որ էրն ի սկզբանէ զորմէ լուաքն՝ որում ականատեսն իսկ եղեաք. ըստ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց» (Ա. Յովհ. Ա. 1):

Քրիստոսի առաքելութեան պատմականութիւնը դրսեւորւում է նաեւ այն առաքելութեամբ, որ նրա հետեւորդները ի գործ դրին Աւետարանի պատգամը տարածելու Յունա-Հռոմէական աշխարհում: Երբ Յիսուսը պատրաստւում էր թողնել իր աշակերտներին եւ վերադառնալ Հօր մօտ՝ յայտարարեց. «ի հասանել հոգւոյն սրբոյ ի վերայ ձեր, եւ եղիջիք ինձ վկայք Երուսաղէմ եւ յամենայն Հրէաստանի եւ ի Սամարիա, մինչեւ ի ծագս երկրի» (Գործք. Ա. 8):

Աւետարանի հարուստ իրադարձութիւններից ամենակարեւորին՝ յարութեանը հաւաստիութիւն հաղորդելու համար անհրաժեշտ էր ականատեսների անսուտ վկայութեան. «Պետրոս եւ Յակոբոս, Յովհաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Թովմաս, Բարթողիմէոս եւ Մատթէոս, Յակոբոս Ալ-

փեան եւ Շմաւոն նախանձայոյզ եւ Յուդա Յակոբեան: Սոքա ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանամբք եւ Մարեմաւ մարբն Յիսուսի եւ եղբարքք նորա» (Գործք. Ա 13—14): Տասներկու վկաները (Յուդային եթէ չհաշուենք) տասնմէկը, Յիսուսի ազգակիցներից մի քանիսի աջակցութեամբ Աւետարանի պատգամների առաջին տարածողները եղան: Գողգոթայի ողբերգութեանը յաջորդած յարութեան եւ Տիրոջ խոստացած «երկնից արքայութեան» ականջալուր ժամանակակիցները շարունակում էին հարցնել. «Տէր՝ եթէ ի ժամանակի ասա յայսմիկ հաստատելոց իցես զարքայութիւն Իսրայէլի» (Գործք. Ա 6):

Աշակերտները օր-օրի հետեւել էին Ուսուցչին, որպէսզի հետագայում, երբ մենակ մնացին կարողանային Յիսուսի գործը շարունակել: Մատաթիայի ընտրութեան կապակցութեամբ պարզուեց. «պարտ է յարանցս յայսցանէ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի, յորում մուտ եւ ել առ մեզ Տէր Յիսուս սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու մինչեւ ցօրն՝ յորում վերացաւ ի մէնջ, վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում ի սոցանէ» (Գործք. Ա 21—22): Աշակերտները, որ պատրաստ էին հանդէս գալ որպէս ականատես վկաներ Յիսուսի յարութեան, դեռեւս ամբողջ խորութեամբ չէին գիտակցում իրենց վստահուած առաքելութեան տիեզերական նշանակութիւնը: Միայն այն ժամանակ, երբ Յիսուսի խոստացած վերադարձը իրականացաւ՝ նրա համախոհները քաջութիւն ունեցան ազդարարելու մարդկութեան Յիսուսի աստուածութիւնը: Ս. Հոգին իջաւ հրաքանչիւրի վրայ եւ նրանք «սկսան խօսել յայլեւայլ լեզուս որպէս եւ հոգին տայր բարբառել նոցա» (Գործք. Բ 4): Այս դէպքից յետոյ Պետրոս առաքեալը համաձակուեց յայտարարել. «Արդ ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունն Իսրայէլի, զի եւ տէր զնա եւ օծեաց Աստուած արար, զայն Յիսուս՝ զոր դուքն խաչեցէք» (Գործք. Բ 36):

Նոր ուխտի համայնքի կազմաւորման համար վճռորոշ նշանակութիւն ունեցաւ ականատեսների վկայութիւնը՝ Յիսուսի յարութեան եւ Ս. Հոգու բաշխման իրադարձութիւնները, որոնց շնորհիւ նոր-նոր կազմաւորուող եկեղեցու գործունէութիւնը ոչ միայն անհերքելի վաւերականութիւն ստացաւ, այլեւ արդիւնաւէտ եղաւ. «եւ յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրեւ երեք հազարք» (Գործք. Բ 41):

Եկեղեցիին գոյութիւնը սերտօրէն պայմանաւորուած է Ս. Հոգու բաշխման եւ Առաքեալների, որպէս ականատեսի քարոզչութեան, որից եւ բխում է քրիստոնէական եկեղեցու թէ Սուրբ եւ թէ Առաքելական լինելը: Ինչպէ՞ս պէտք է հասկանալ եկեղեցուն տրուած «սուրբ» եւ «առաքելական» բնորոշումները:

Ս. Հոգին ոչինչ նոր չի աւելացնում այն առաքելութեանը, որ Յիսուս արդէն կատարել էր եւ աւանդ թողել, որովհետեւ՝ «Զի ի նմա Աստծուն հաճեցաւ ամենայն լրումն աստուածութեան բնակել» (Կող. Ա:19): Ս. Հոգին է «որ վկայէ, զի հոգին իսկ է ճշմարտութիւն (Ա. Յովհ. Ե 6), «նա զիս փառաւորեսցէ» ասում է Յիսուս, «զի յիմմէ առնուցու եւ պատմեսցի ձեզ» (Յովհ. ԺԶ 14): Որով Ս. Հոգու գալը ոչ թէ հուսազեցնում կամ հեղինակազրկում է Առաքեալների վկայութիւնները, այլ՝ հաստատում, լրացնում:

Բաւարար հիմք կայ եզրակացնելու, որ Ս. Հոգու վկայութիւնը վճռական նշանակութիւն ունեցաւ Նոր Կտակարանի Կանոնի կազմութեան համար: Պէտք է նկատել, որ Չորս Աւետարանների, Գործք Առաքելոցի, Պօղոսի Թղթերի, եւ Յայտնութեան գրքերի վկայութիւնների նպաստակն է՝ լրացուցիչ տեղեկութիւններ հաղորդել Յիսուսի կեանքի առաքելութեան, մասնաւո-

բաբար յարութեան մասին: Քննելով վերը թուարկուած երկերը տեսնում ենք առաքեալների գործունէութեան շրջանակը: Հեռեւութիւնը արդէն գալիս է ինքնին, գրաւոր երկերի հեղինակները, իրենք իսկ առաքելութեան ու ներշնչանքի Աստուածային եւ մարդկային համատեղ գործունէութեան ուղին են մատնանշում: Ուշագրաւ է, որ աւանդութիւնը առաքելական ծագում եւ ճանաչում է վերագրում նաեւ Մարկոսի եւ Ղուկասի Աւետարաններին, թէեւ վերջիններս բուն առաքեալների փաղանգին չէին պատկանում եւ Յիսուսին անգամ չէին տեսել: Այս զոյգ Աւետարաններին վաւերականութիւն հաղորդելու համար աւանդութիւնը դիմում է Պետրոս եւ Պօղոս առաքեալների վկայութեան, քանի որ սոյն երկու գործերը պարունակում են յիշեալ առաքեալների գործունէութեան անդրադարձը: Այլ երկերի հաւաստիութիւն հաղորդելու այս ձեւը հետագայում եւս օգտագործուեց Նոր Կտակարանի Կանոնի մէջ ներառնել այլ գործեր (Թուղթ առ Եբրայեցիս, Յայտնութիւն Յովհաննու), որոնց հեղինակային պատկանելութեան շուրջ ամենավաղ շրջանից կասկածներ են եղել, որը շարունակում է մինչեւ հիմա: Այս կապակցութեամբ, առաքեալների իրրեւ ականատես վկայումների կ'արժէքազրկուէր՝ առանց Հոգեգալստեան հրաշքի, երբ Ս. Հոգին իջաւ ոչ միայն առաքեալների վրայ այլ նաեւ ամբողջ եկեղեցու: Հետեւաբար եկեղեցին հիմնաւորուեց ոչ միայն առաքեալների գործունէութեամբ, այլեւ շնորհիւ, նրանց վրայ իջած Ս. Հոգու ներշնչումով: Չխորանալով այլ մանրամասնութիւնների մէջ, կարող ենք ասել, որ եկեղեցու կազմաւորման օրերին, ոչ մէկի մտքով չանցաւ Նոր Կտակարանի Կանոնի մէջ ներառնել գրքեր, որոնք առաքելական ծագում չունէին: Ս. Հոգու ազդեցութիւնն է բնորոշում որեւէ գրքի վաւերականութիւնը: Ուղղափառ գաղափարների ու վկայութիւնների հիմնական ակունքները սրանք են:

Կարող ենք համոզուած ասել, որ եկեղեցու սկզբնական շրջանի պատմութիւնը ներկայացուած է Գործք Առաքելոցի էջերում, շարադրուած Ղուկաս Աւետարանչի ձեռքով, որը հեղինակն է նաեւ երրորդ Աւետարանի: Գիրքը բաժանւում է երկու անհաւասար մասերի, առաջին մասը Գլխ. Ա—ԺԱ վերաբերում է Երուսաղէմի եկեղեցու ձեւաւորման, հոգեգալստեան դէպքի նկարագրութեան, ներքին կազմակերպութեան, եւ ակնաւոր ղեկավար անձերի գործունէութեան նկարագրութեանը: Երկրորդ մասը, որ ընդգրկում է գրքի մնացած գլուխները, յատկացուած է հեթանոսաց առաքեալի գործունէութեան, որին Ղուկաս անուանում է Պօղոս (Գործք. ԺԳ 9), թէեւ սկզբնական գլուխներում նրան կոչում է Սաւուղ:

Երուսաղէմի համայնքը ղեկավարում էր 12 առաքեալների կողմից. Պետրոս առաքեալը, որ եռանդուն, ընդգծուած անհատականութիւն էր, հանդէս է գալիս միւսների անունից: Ուստի տեղին կը լինի նշել, որ Յիսուսի հանրայայտ խօսքերը. «զի դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ» (Մատթ. ԺԶ 18)[2] արտասանուած Կեսարիա տանող ճանապարհին, ցուցանիշներից մէկն է վեր ակնարկուած դերի, որ Պետրոսը ունէր Երուսաղէմում:

Երուսաղէմի եկեղեցին բազմաթիւ եկեղեցիներից ոչ թէ մէկն էր, այլ հէնց ինքը բուն ԵԿԵՂԵՑԻՆ էր, միակ եկեղեցին՝ «մնացորդացը» Հին Կտակի, որի մասին մարգարէները գուշակել էին, եւ որը որդեգրել էր որկուած Փրկչին: Հեթանոսաց եկեղեցին, որի յախուռն ջատագովն ու կազմակերպողը էր Պօղոս առաքեալը, որի համար արժանանում է «ձիթենիդ վայրենի» (Հռովմ. ԺԱ 17) պատուաստուած արմատին բնութագրմանը: Առաջնորդ-

ունելով 12 առաքեալների կողմից, սկզբնական հրեայ-քրիստոնեայ նորադարձներից կազմուած գաղութը ակնկալում էր ստեղծումը երկնային Երուսաղէմի որպէս սուրբ քաղաք, որ պիտի իջնէր երկնքից, ըստ Յայտնութեան գրքի գուշակութեան. «Եւ պարիսպ քաղաքին ունէր հիմունս երկոտասան, եւ ի նոսա երկոտասան անուանք երկոտասան առաքելոց գառինն» (Յայտ. ԻԱ 14): Պատմութիւնը եւ վախճանաբանութիւնը այնքան սերտօրէն են միահիւսուած Գործք Առաքելոցի սկզբնական գլուխներում, որ դժուար է մէկը միւսից բաժանել: Պետրոս իր հոգեգալստեան ճառի մէջ, Ս. Հոգու գալուստը ընկալում էր ճակատագրական արութեամբ, որպէս իրականացումը Յովել մարգարէի վախճանաբանական գուշակութեան. «եւ էին միաբան ամենեքեան ի սրահին Սողովմոնի: Եւ այլոց անտի ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա. այլ յարգէր զնոսա ժողովուրդն» (Գործք. Զ 12—13):

Գործք Առաքելոցի 12-րդ գլուխը եկեղեցու այս սկզբնական շրջանի պատմութիւնը բերում հասցնում է աւարտին: 12 առաքեալներից կազմուած ղեկավար մարմինը դադարում է որպէս այդպիսին գործելուց: Հերովդէս «սպան զՅակովբոս զեղբայրն Յովհաննու սրով» (Գործք. ԺԲ 2) եւ ըստ որոշ տուեալների ոչ մի ճիգ չարուեց նրա տեղ ընտրել մէկ ուրիշի, ինչպէս արուեց Յուդայի բացակայութեան դէպքում: Պետրոս իր ձերբակալութիւնից եւ փախուստից յետոյ՝ «ել գնաց յայլ տեղի» (Գործք. ԺԲ 17): Թէեւ Պետրոսը պահում է իր հեղինակութիւնը եւ հմայքը, որպէս առաքեալներից առաջինը բայց այդ հեղինակութիւնը ցացարձակ չէր, քանի որ Պօղոս հակառակում է նրան եւ ճիշդաւորման սերմեր ցանում (Գաղ. Բ): Երուսաղէմում առաջնութիւնը աստիճանաբար անցնում է Յակովբոս առաքեալին (Գործք. ԺԵ), որը չէր պատկանում 12-ի խմբին: Պետրոս առաքեալի ունեցած դերը եւ թողած ժառանգութիւնը եկեղեցու կազմակերպութեան բնագաւառում բարձր է գնահատում, յատկապէս եպիսկոպոսի պաշտօնի հաստատման առնչութեամբ, եւ յիշում ու մեծարում է որպէս «յառաքելութիւն թլփատութեան» (Գաղ. Բ 7—8), որ հեռանկար չունեցաւ, քանի որ հրեաները մերժեցան Փրկչին, իսկ այն «մնացորդացը» որ ընդունեց Յիսուսին՝ ինչպէս գիտենք Յ. Ք. եօթանասունական թուականներին լրիւ կործանուեց:

Այս փուլերից յետոյ ասպարէզ է մտնում հեթանոսաց առաքեալը Պօղոս, որին է յատկացուած Գործք Առաքելոցի ԺԳ—ԻԸ գլուխները: Գրեթէ մի ամբողջ յիսնամեակ իշխելով, նա քարոզչական շրջագայութիւնների մի ջոցով ողջ միջերկրականի շրջակայ քաղաքներում հաստատում է նոր հաւատացեալներ: Աստծոյ բոլոր եկեղեցիները Երուսաղէմի եկեղեցու նման, արժանի են ստանալու Աւետարանի լոյսը եւ Ս. Հոգու շնորհները: Հակառակ բոլոր վիճաբանութիւններին, Պօղոս միշտ զօրավիգ կանգնեց Պաղեստինի փոքրիկ համայնքին եւ յարգեց այդ աթոռի նախագահութիւնը որպէս աղբիւր եւ պաշտպան հաւատի, նոյնիսկ, երբ 12-ի խումբը վերջնականապէս թողել էր Երուսաղէմը: Պօղոս առաքեալը, կրօնա-ուսուցողական ծրագրերի գործադրութեան համար, Երուսաղէմի երէցների հովանաւորութիւնը երաշխաւորեց, իսկ իր շրջագայութիւնների ընթացքում, երբ հանգանակութիւններ էր անում՝ միշտ յիշում էր Հրէաստանի եղբայրների կարիքները:

Բայց եւ Պօղոսը բազում անգամներ հաստատում է իր կեցուածքը, որ ամէն եկեղեցի հաւասար է Աստծոյ առջեւ եւ չկայ խտրականութիւն Հրեայի եւ Յոյնի միջեւ: Նրա գաղափարները շատ յստակ են. նա ցանկանում է, որ բոլոր քրիստոնեաները, որ ապրում են մէկ համայնքում, պատկանեն մէկ եկեղեցու, սակայն այս առողջ սկզբունքը, որը ըստ էութեան յանգում է հա-

սարակաց օգտակարութեան, տուեալ դէպքում՝ նորաստեղծ համայնքներին նպաստելու գործին, դառնում է պատճառ քննադատութեան եւ մասնաւորուած բախումների հրեայ եւ յոյն գաղութների միջեւ: Նման բարդ եւ սրուած դրութիւն էր տիրում Կորնթոսի նահանգում, որտեղ երկու խմբեր անջատուել էին եւ ծրագրում էին ստեղծել առանձին համայնքներ. «իւրաքանչիւր ոք ի ձէնջ ասէ, Ես Պաւղոսեան եմ, եթէ ես Ապողոսեան, եթէ ես Կեփայեան, եթէ ես Քրիստոսեան. իսկ արդ բաժանեա՞լ ինչ իցէ Քրիստոս» (Ա Կորնթ. Ա 12—13): Այդ ընդհարումները չազդեցին Պօղոսի եւ Պետրոսի ջերմ փոխյարաբերութեան վրայ, ըստ աւանդութեան, երկու առաքեալներն էլ տեղափոխուեցին Հռոմ եւ արեան մարտիրոսութեամբ վկայակոչեցին Քրիստոսի առաքելութեան տիեզերական ոգին:

Սկզբնաղբիւրներում Քրիստոսի անձին ականատեսների շարքում յիշատակւում է նաեւ Յովհաննէսը՝ Զեբեդիայի որդին, որին կոչում էին «սիրեցեալ աշակերտ»: Նա էլ, Պետրոսի եւ Պօղոսի նման, հեղինակն է համարւում Նոր Կտակարանի որոշ գրքերի եւ ամենից աւելի առնչւում է Եփեսոսի համայնքի հետ: Յովհաննէս առաքելական խմբակի ամենապայծառ եւ Պետրոս առաքեալի մտերիմ գործակիցներից մէկն էր, եւ հէնց այդ պատճառով չափազանց նշանակալից դեր կատարեց Երուսաղէմի եկեղեցական կեանքում: Յիսուսի հետ ունեցած մտերմութիւնը նրան տուեց ակնյայտ հեղինակութիւն: Յաւօք նրա անունը միայն մէկ անգամ է յիշւում իր թղթերում, որտեղ Յովհաննէսի, Յակոբոսի եւ Պետրոսի հետ միասին համարւում է Երուսաղէմի եկեղեցու «սիւներից» մէկը (Գաղ. Բ 9): Համաձայն աւանդութեան իր կեանքի վերջին օրերը անցկացրեց Եփեսոսում, որի հիմնադրումը վերագրւում է Պօղոսին (Գործք. ԺԹ 8—9): Իր թուղթը, վերջինը, որ ընդգրկուեց Նոր Կտակարանի Կանոնի մէջ, առանձնանում է իր բնոյթով, առաւելապէս հեղինակի Աւետարանի պատգամի խոհական եւ յայտնութեան պատկերացումով, որի համար էլ բիւզանդական եկեղեցին նրան անուանում է «Աստուածաբան» աւետարանիչ: Յովհաննէս շեշտում է Աւետարանի պատգամի ծիսական նշանակութիւնը:

Ժամանակակից փաստագրական առատ ու արժէքաւոր սկզբնաղբիւրներում յատուկ ուշադրութիւն է տրւում սկզբնական եկեղեցու ծիսական կեանքին[3]: Այս աշխատութիւնների մէջ լայն տեղ է յատկացուել մկրտութեան եւ Ս. Պատարագին, որը նախնական եկեղեցու քարոզչութեան մեծարժէք տարրերից մէկն էր համարւում: Ըստ որում, ձեռք բերուած առատ ու արժէքաւոր փաստագրական տուեալների շնորհիւ, հաստատել են հրէականութեան ազդեցութիւնը Նոր Կտակարանի ծիսակատարութեան վրայ: Նախնական եկեղեցին Ս. Պատարագի խորհուրդը կատարում էր ճիշտ այնպէս ինչպէս վերնատան մէջ Յիսուսի կողմից կատարուած վերջին ընթրիքը: Գործք Առաքելոցի առաջին 12 գլուխներում պահպանուած տեղեկութիւնից պարզ տեսնում ենք, որ Պետրոս առաքեալը, որը գլխաւորում էր առաքելական դասը, նախագահում էր այդ ընթրիքներին: Պետրոսի այս պաշտօնը ըստ երեւոյթին իմաստաւորում էր Յիսուսի խօսքը «Դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ» (Մատթ. ԺԶ 18), «դու յորժամ դարձիս եւ հաստատեսցես զեղբարս քո» (Ղուկա. ԻԲ 32), «արածեա զգառինս իմ» (Յովհ. ԻԱ 15—17): Յիսուս հէնց ինքն էր այդ «վէմ»-ը, եւ «հովիւ»-ը. «զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել բաւն զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս»: Բայց իր աշակերտներից մէկին տուեց իշխանութիւն՝ կատարելու այս ծառայութիւնը Ե-

րուսաղէմի հրեայ, քրիստոնեայ համայնքի մէջ, որը եւ հետագայում ծառայեց որպէս պատճէնը ապագայ Քրիստոնէական պաշտամունքների:

Ինչպէս արդէն հշել ենք, որոշ ժամանակից յետոյ Պետրոսը հեռանում է Երուսաղէմից (Գործք. ԺԲ 17) եւ նրան փոխարինում է Յակոբոս առաքեալը, որը դարձաւ գլուխ Երուսաղէմի եկեղեցու: Յակոբոսի մահից յետոյ (Գործք. ԺԲ 2) մնացած 11 առաքեալները, Պետրոսի գլխաւորութեամբ, սկսում են առաքելական գործունէութեան առաւել հետաքրքիր շրջափուլերից վերջինը՝ համայնքների ստեղծումը, նորաստեղծ համայնքների ղեկավարութեան հոգսերը եւ ծէսերի կատարումը ուրիշների վստահելով: Պօղոս առաքեալը այս նոր դրութիւնը յարգելով, մկրտութեան արարողութիւններ է կատարում միայն շատ բացառիկ դէպքերում, ինչպէս ինքն է խոստովանում. «զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել՝ այլ աւետարանել» (Ա Կորնթ. Ա 17): Վարդապետութիւն ԺԲ Առաքելոց երկում վկայութիւն կայ.

«Ամէն առաքեալ երբ այցելութեան է գալիս, թող ընդունուի ինչպէս տէրը, բայց թող հիւրընկալուի միայն մէկ օր կամ երկու եթէ անհրաժեշտ լինի, եթէ երեք օր մնայ՝ նա կեղծ մարգարէ է» (ԺԱ:4—5):

Գործք Առաքելոցից եւ Պօղոս առաքեալի թղթերից այն ընդհանուր պատկերացումն ենք ստանում, որ սկզբնական շրջանում համայնքները կառավարում էին հաւասարական իշխանութեամբ, բաղկացած երեք նուիրապետական կարգերից. **եպիսկոպոս** (վերատեսուչ), **պրեսբիտերոի** (երէց) եւ **պրոիստամենոի** (նախագահ): Սակայն քիչ յետոյ, առաջին դարի աւարտին, բոլոր համայնքների վրայ նախագահում էր միայն մէկ եպիսկոպոս: Ի՞նչը պատճառ դարձաւ նման կազմակերպչական վերակազմաւորման: Ոչ մի վկայութիւն չկայ, որ սկզբնական շրջանում որեւէ հակառակութիւն կար եպիսկոպոսի ինքնիշխանութեան դէմ եւ այդ պաշտօնի աստիճանական զարգացումը շատ բնական ընթացք ունեցաւ եւ այն սերտ կապ ունէր պաշտամունքային միջավայրի եւ ծիսական փոխյարաբերութիւնների հետ: Անհրաժեշտ է եպիսկոպոսի աստիճանի պատմական գնահատութիւնը տալու համար դիտել այն սկզբնական եկեղեցու պաշտամունքի էվոլուցիայի հետ, որը պահանջում էր մէկ պաշտօնեայ, որի առաջին պարտականութիւնն էր՝ նախագահել արբազան պատարագներին: Աղբիւրների հաղորդած վկայութիւններից տեսնում ենք, որ սկզբնական համայնքների կեանքում անհամեմատ առաջնակարգ տեղ ունէր Ս. Պատարագի խորհուրդը: Ս. Պատարագի ծիսակատարութեանը նախագահելու էր մի անձ, Քրիստոսի նմանողութեամբ, Քրիստոսին ներկայացնող: Այս պարտականութիւնը Երուսաղէմի եկեղեցում վստահուած էր Պետրոս առաքեալին եւ քանի որ, բոլոր նախնական համայնքները անկասկած հետեւում էին Երուսաղէմի օրինակին, միանգամայն բնական է, որ նրանք պէտք է որդեգրէին Երուսաղէմեան մօտեցումը: Սա հաստատւում է որոշակի, երբ ուշադիր կարդում ենք Գործք Առաքելոցի առաջին 12 գլուխները, որտեղ կան նկարագրութիւններ նախնական համայնքների եւ մասնաւորաբար ի միտ ենք ունենում Պետրոս առաքեալի Կոռնելիոսի եւ այլ հեթանոսների մկրտութեան առիթով կատարած յայտարարութիւնը՝ «եկն հոգին սուրբ ի վերայ նոցա, որպէս եւ ի վերայ մեր ի սկզբանն» (Գործք. ԺԱ 15, հմմտ. Ժ 44, 47, ԺԱ 17):

Սուրբ Իգնատիոս Անտիոքացին լաւագոյն ջատագովը **մոնարկիկ** (monarchic) եպիսկոպոսութեան (100 թ Յ. Ք.) որպէս հաւասարի սկզբնաղբիւր՝ որոշ գաղափար է տալիս Զմիւռնիայում ձեւաւորուող համայնքի: Այնտեղ եկեղեցին ունէր մէկ եպիսկոպոս—Աստծոյ պատկերը (իկոն), որին օգնում

է երէցներից բաղկացած մի խմբակ, որը այսպէս ասուած, արտացոլում է՝ առաքելական դասը, որ տնօրինում էր Երուսաղէմի եկեղեցին.

«Ես խնդրում եմ ձեզնից, ունեցէք ոգին ամէն ինչ տնօրինելու աստուածային համերաշխութեամբ, եպիսկոպոսի նախագահութեան տակ, որը վերցնում է Աստծոյ տեղը, եւ երէցները, որոնք բռնում են Առաքեալների տեղը, եւ սարկաւագները, որ շատ մօտ են մեր արտին եւ որոնց է վստահուած Աստծուն ապաստորելու պաշտօնը... բոլորս պէտք է յարգենք սարկաւագներին, ինչպէս յարգեց նրանց Յիսուս Քրիստոս, նոյնպէս եւ եպիսկոպոսին, որը Աստծու պատկերն է եւ երէցները, որ ներկայացնում են առաքեալների դասը»:

Սա կարեւոր նկատառում է, քանի որ, Իգնատիոս հայրապետի եկեղեցաբանական մտածողութիւնը բացայայտում է այն միտքը, որ տեղական եկեղեցին ոչ թէ մէկ մասնիկն է տիեզերական եկեղեցու, այլ հէնց տիեզերական եկեղեցին է՝ գլուխ ունենալով մեր Տէրը Յիսուսին եւ առաքեալներին: Ս. Իգնատիոս հայրապետի համար առաքեալների յաջորդականութիւնը ներկայ է եւ կապուած երէցների նուիրապետական կարգի հետ: Եպիսկոպոսի պաշտօնն է ներկայացնել Հօրը, լինել աղբիւր եւ բացարձակ կենտրոն եկեղեցու միութեան, ինչպէս Հայրը աղբիւրն է Աստուածութեան:

Ըստ էութեան եպիսկոպոսի պաշտօնը իր պարտականութեան բնութագրումով կարող էր միայն յանձն առնել մէկ անձնաւորութիւն եւ հարկ չկայ ապացուցելու, թէ այդ պաշտօնը, սկզբնական եկեղեցին դիտում էր որպէս շարունակականութիւնը իրաքանչիւր եկեղեցու այն առաքելութեան, որ Պետրոս առաքեալը կատարել էր Երուսաղէմում: Ելնելով ընդունուած այս պատկերացումից՝ պէտք է մեկնել Յիսուսի խօսքերը ուղղուած Պետրոսին. «դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ» (Մատթ. ԺԶ 18): Այս մտածելակերպի ամենայայտնի պաշտպաններից էր Կարդիգինայի առաջնորդ Սուրբ Կիպրիանոս հայրապետը (249—258): Ըստ Կիպրիանոսի, ողջ եպիսկոպոսութիւնը մէկ է՝ շնորհիւ այն բանի, որ «մէկ է հաւատքը»—Պետրոսի հաւատքը. եպիսկոպոսները եկեղեցիներում բազմում են «մէկ եւ միեւնոյն» աթոռի վրայ եթէ խոստովանւում են նոյն հաւատքը»[4]:

Կիրակնօրեայ սուրբ պատարագը, այն ընթրիքը, որի միջոցով առարկայապէս շօշափում եւ ակնկալում ենք գալիք երկնից արքայութեան ընթրիքը, այն պահն է երբ եկեղեցին դարձաւ իսկապէս ԵԿԵՂԵՑԻ, որովհետեւ այդ պահին էր, որ բոլորը հաղորդակցուեցին Տիրոջ հետ, երբ մկրտութիւններ կատարուեցին, հաւատի վերաբերեալ մանրամասներ ուսուցանուեցին, եւ եպիսկոպոսներ ու երէցներ ընտրուեցին: Հէնց այս առիթով էր, որ հարեւան համայնքներից եպիսկոպոսներ այցելութեան էին գալիս եւ մասնակցում նոր եպիսկոպոսների ձեռնադրութեան արարողութեան որտեղ եւ առիթը օգտագործելով, ժողովներ էին գումարում, դաւանական-եկեղեցական հարցեր քննելու, որոշումներ կայացնելու համար: Նոյնիսկ հալածանքները չկարողացան խանգարել կամ ընդհատել Քրիստոնեաների մասնակցութիւնը Կիրակնօրեայ Պատարագների: Հակառակ բոլոր դժուարութիւնների Քրիստոնեաները շարունակեցին այս սովորութիւնը, որը համարում էին իրենց հաւատի բուն էութիւնը, ինչպէս Գործք Առաքելոցը հրահանգում էր. «եւ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն, եւ հաղորդութեան՝ եւ բե-

կանելոյ հացին, եւ աղօթից» (Բ 42)։ Նրանք չէին կարող հրաժարուել այս իրական փորձից՝ առանց արբապղծելու Նոր Ուխտի պատուիրանը։

ԴՈԿՏ. Տ. ՆԵՐՍԷՍ ԱԻԱԳ ՔՀՆՅ. ՆԵՐՍԷՍԵԱՆ
Լոնդոն

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Սրբազան Պատարագամատոյցք Հայոց... հանդերձ քննութեամբք՝ Հ. Յ. վ. Գաթրճեան. Վիեննա։ Մխիթարեան Տպ., 1897, էջ 536։
2. V. Kesich, „The problem of Peter's Primacy in the New Testament and the early Christian Exegesis", St. Vladimir's Seminary Quarterly IV, 2-8 (1960), 2-25; **The Primacy of Peter in the Orthodox Church.** The Faith Press, 1973.
3. O. Cullmann, **Early Christian Worship.** London: SCM, 1953.
4. St. Cyprian, **The Lapsed. The Unity of the Catholic Church,** translated and annotated by Maurice Bevenot. London: 1957 (Ancien, Christian Writers).